սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 23.02.2023 թվականի թիվ 32 որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____ 2023 թվականին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**